Ը. ՏԱՐԻ 2297 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 2 ՀՈՌԻ 4384 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1891 19 ՍԷՖԷՐ 1309 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ Յ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه ده غلطه ده نورادونكيان خانده آرهولك
غزته سى اداره سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան դահեկան արծաթ	150
» » Վեցամսեայ » »	75
» » Եռամսեայ » »	40
Օտար երկիրներէ Տարեկան Ֆրանք	56
» » Վեցամսեայ »	28
Ընտիր թուղթի վրայ [illegible] Տարեկան Օսմ. Ոսկի	2
Գաւառաց Թղթատարի ծախք միասին	Ղրշ. 50

Խմբագրութեան [illegible] ուղղուած նամակ, [illegible] գրութիւն ետ չի դարձուիր.

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՍԵՊՏ. 11|23 1891

ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ ՄԱՅՐ–ԱԹՈՌՈՅ

Խ.

ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿ. ՏԷՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ. Բնիկ Ապարանցի Պաչ Ապարանէ. Հաւանաբար 58 տարեկան, աշակերտ և միաբան Մայր Աթոռոյ։ Արտաքին մատակարարութեանց պաշտօններով զբաղած շարունակ, և մանաւանդ Քիշնեւի (գլխաւոր քաղաք Պեսարաբիոյ կուսակալութեան) աթոռական կալուածոց մատակարարութեան մէջ, և այդ պաշտօնին ժամանակ անհաւատարմութեան ամբաստանութեան ներքեւ ինկած, և պաշտօնէ արձակուած, և Գէորգ Կաթողիկոսի օրով ի մոռացութեան մնացած։ Մակար Կաթողիկոս վերաքննութեան միջոցաւ արդարացուց իւր նախկին աշակերտը, սինոդական անուանեց, վանքական կառավարութեան գլուխ կարգեց, և եպիսկոպոս ձեռնադրեց ի 1886։ Նորէն Սարգիս եպիսկոպոսի մատակարարութեան վրայ շշուկներ սկսան, և Մակար Կաթողիկոս ուրիշի յանձնեց նորա պաշտօնն, և կը մնար նա լոկ սինոդական, մինչեւ տարւոյս սկիզբները։ Ճեմարանի մէջ պատահած յուզումները քննելու համար յանձնարարութիւն ստանալէ յետոյ, առժամեայ կերպով տեսչութեան կոչուեցաւ, այլ Կաթողիկոսի վերահաս մահուամբ, պաշտօնին վրայ հաստատուեցաւ, և այժմ եւս կը վարէ Ճեմարանի տեսչութիւնը։ Սարգիս եպիսկոպոս աւելի տեսակ պաշտօններու փափաք և յաւակնութիւն կրնար ունենալ՝ քան այսպիսի բարձր ուսումնական պաշտօնի մը։ Էջմիածնայ Սինոդի ներքին շփոթութեանց մէջ Սարգիս եպիսկոպոս զգացմամբ սինոդականաց հետ է, իսկ պաշտօնի շահով Տեղակալի հետ, ուստի մերթ այս կողմ կը հակի և մերթ այն կողմ։

ԽԱ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿ. ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ. Արճէշ գաւառի Ցարուխին գիւղէն, աշակերտ Մշոյ Ս. Կարապետին, այլ միաբան Բագրեւանդայ Ս. Յովհաննէս վանուց. և աբեղայացած 34 տարեկան 1857ին։ Գրեթէ նոյն թուականէն ալ յիշեալ վանուց կառավարիչն է եղած, նախ իբր օգնական հանգուցեալ Սահակ եպիսկոպոսի, յետոյ իբր Տեղակալ և ի վերջոյ իբր վանահայր, որուն հետ է Պայազիտու և Ալաշկերտի առաջնորդութիւնն։ Յովհաննէս եպիսկոպոս արդիւնաւոր եղած է վիճակին, վանուց նորոգութեամբ և ժողովրդեան հայրական խնամածութեամբ, և տեղական դժուարութեանց դէմ հսկողութեամբ։ Իւր հայրական պաշտօնին մէջ մեծ ճգնաժամի եղած է վերջին ժամանակներու յաջորդող սովը։ Շինած վանքը փլած է, ինքն ալ մահուան վտանգներ անցուցած է, և յետոյ իւր ոգեպահիկը զոհելով իւր թեմականաց օգնած է սովու ժամանակ։ Սովելոց Յանձնաժողովը մեծապէս գոհ մնացած է նորա ընթացքէն, և Տ. Յարութիւն Պատրիարքն որ ի մօտոյ ծանօթ էր նորա արժանեաց, ինքնաբերաբար եպիսկոպոսական վկայագիր տուաւ նմա, որ և ձեռնադրեցաւ 1886ին 63 տարեկան հասակին մէջ։ Սակայն Յովհաննէս եպիսկոպոս արդէն տկարացած էր տարիքին, բայց աւելի կրած վիշտերուն պատճառաւ, և այժմ անկար ծերութեան վիճակի հասած է, և եթէ ուրեք երբեք դանգատներ լսուին իւր վրայ, պէտք է վերագրել զայնս ո՛չ Յովհաննէս Սրբազանի անձին այլ զինք պատող անձերուն։

ԽԲ.

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿ. ԴՈՒԹԵԱՆ. Լօռի գաւառի Վարդբլուր գիւղէն, 53 տարեկան, դպրութեան ժամանակ միջոց մը ի Կոստանդնուպոլիս մնացած, և Տ. Մատթէոս Կաթողիկոսի հետ յէջմիածին դառնալով աբեղայացած 1863ին իբր միաբան Մայր Աթոռոյ։ Վարչական գործերով գրեթէ բնաւ զբաղած չէ, այլ քարտուղարութեան և ուսուցչութեան և տպարանի պաշտօններով աշխատած է շարունակ։ Սինոդական անուանեցաւ Տ. Մակար Կաթողիկոսէ և եպիսկոպոս ձեռնադրուեցաւ 1886ին, և այժմ ալ կը պահէ նոյն պաշտօն, ունենալով միանգամայն տպարանի վերատեսչութիւնն, և Արարատի խմբագրապետութիւնն, և լինելով կրօնական գրաքննիչ Մայր Աթոռոյ նկատողութեան ենթարկեալ գրոց։

ԽԳ.

ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿ. ՕՐՄԱՆԵԱՆ. Բնիկ Կոստանդնուպոլսեցի 50 տարեկան, ծնած լինելով ի 1841։ Ծննդեամբ հռովմէականութեան մէջ գտնուած, և աշակերտած Անտոնեան Միաբանութեան Հռովմայ վանուց, և անդէն աբեղայացած։ Ուսման ընթացքը կատարած է Հռովմայ եկեղեցական Համալսարանին մէջ, և ամբողջ ընթացքը լրացնելով իմաստասիրական, աստուածաբանական և կանոնագիտական ճիւղերու մէջ, վարդապետական աստիճան (տօքթօրա) ստացած, և աստուածաբանական կաճառոյն անդամակցած։ Հայ-հռովմէական հասարակութեան Հասունեան խնդրոց մէջ գործունեայ դեր ունեցաւ, և բազմաթիւ գրութիւններ հրատարակեց, մինչեւ որ 1879ին պատուաւոր ազգայնոց խմբով մը ազգային Եկեղեցւոյ գիրկը դարձաւ, և պաշտօնէութեան մտաւ։ Այն թուականէն մինչեւ հիմա Տ. Մաղաքիա եպիսկոպոսի գործունէութիւնն երկու մասերու կը բաժնուի։ Առաջինը վարչական, որ է՝ Կարնոյ առաջնորդութիւնը 1880էն 1887, յորում և եպիսկոպոսացաւ 1886ին. իսկ երկրորդ մասն ուսումնական, ինչպէս է ուսուցչութիւն աստուածաբանութեան ի Ճեմարանին Էջմիածնի, և կրօնագիտութեան՝ ի Կեդրոնական Վարժարանի, և ապա վերատեսչութիւն և ուսուցչութիւն Դպրեվանուց Արմաշու, զոր կը վարէ երկու տարիէ ի վեր, վանահայրական պաշտօնի հետ։ Վարչական պաշտամանց կարգին կատարած է նաեւ Տարօնոյ վանօրէից և վիճակին, Վանայ և Աղթամարայ, եւս և Ատաբազարու վարչութիւններն։ Հրատարակութեանց մասին՝ հակահասունեան խնդրոյն պատկանեալներէն զատ, ունի ճառեր և դամբանականներ, բազմաթիւ յօդուածներ, և Հայաստանեայց Աթոռոյ պաշտպանութեան նուիրեալ գեղեցիկ երկասիրութիւն մը։ Կարող եւ ժիր եպիսկոպոս Հայաստանեայց Եկեղեցւոյ, որ մեծ արդիւնք յուսալ կուտայ։ Պոլսոյ մէջ թափառիլ սիրող եպիսկոպոսներէն չէ՛։

ԽԴ.

ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ. Բնիկ Վաղարշապատեցի 48 տարեկան, աշակերտ և միաբան Մայր Աթոռոյ։ Ժամանակ մը վանական պաշտօններ վարեց յետոյ, Կաւկասիոյ գաւառաց մէջ փոխ-առաջնորդական պաշտօններ վարած է և ապա սինոդական եղած Տ. Գէորգ Կաթողիկոսի մահուանէ յետոյ, վերջին օրերս լրագրաց մէջ բացատրուած պարագայներու առթիւ։ Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ ի 1886, և մնաց ի Սինոդականութեան մինչեւ ի 1890, երբ յաջորդեց Տ. Սեդրաքեան եպիսկոպոսի յառաջնորդութեան Տփղիսու, և կը վարէ այսօր նոյն պաշտօնը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Թայմզին Փարիզեան թղթակիցը կարեւոր դիտողութիւն մը կ'ընէ, ապացուցանելու համար թէ ֆրանքեւռուս համաձայնութիւնն երաշխաւորութիւն մ'է խաղաղութեան պահպանման համար։

Այս համաձայնութենէ ետքը, կ'ըսէ, ո՛չ Ռուսիա ո՛չ Ֆրանսա առանձին պիտի չկրնան գործել։ Ֆրանսա այլ եւս չպիտի համարձակի առանձին նետուիլ պատերազմի մը մէջ. զի եթէ կանխաւ չապահովուի թէ Ռուսիա իրեն պիտի հետեւի, Ֆրանսա ինքզինք լքուած, մատնուած պիտի կարծէ, երբ առանձինն պատերազմելու հարկին մէջ գտնուի։ Իւր քաղաքականութիւնը կապելով ռուս քաղաքականութեան հետ, Ֆրանսա առանձինն պատերազմ հրատարակելու իրաւունքէն հրաժարած է գործնականապէս։ Քրոնշդատի դէպքերէն յառաջ, Ֆրանսա կարող էր ինքն իւր գլխուն և իւր հաշուոյն պատերազմիլ, առանց Ռուսիոյ աջակցութիւնը փնտռելու, տեղի տալով ժողովրդեան ճնշման։ Իսկ Քրոնշդատի դէպքերէն ի վեր, եթէ Ֆրանսա զՌուսիա իրեն հետ չգդայ, առաջուան համարձակութիւնը պիտի չունենայ պատերազմ հրատարակելու. զի հանրային կարծիքն ի Ֆրանսա, որ ցայս վայր ինք իրեն վստահելու վարժուած էր, հիմա լքեալ պիտի համարի ինքզինք եթէ Ռուսիա չմասնակցի պատերազմին, յաջողութեան կարեւոր պայման մը բացակայ պիտի կարծէ։ Ուստի և Ֆրանսա ինքնին պատերազմ մը գրգռելու անկարող պիտի մնայ։

Նոյն դիտողութիւն կը պատշաճի նաեւ ռուս քաղաքականութեան, որ Ֆրանսայի հետ դաշնակցութենէն ի վեր, ինքն իւր գլխուն չէ կարող գործել այլ եւս։ Ռուսիա պատերազմ չի կրնար գրգռել, գէթ առժամանակ մի, ո՛ր պատճառաւ նաեւ զի պատերազմի պատրաստ չէ կատարելապէս։

ԼՕՀԷՆԿՐԻՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ

Ֆրանսայէն դուրս, ամէն եւրոպական լրագիրք մեծաւ հետաքրքրութեամբ կը խօսին Փարիզի դէպքերուն վրայ որք պատահեցան Լօհէնկրինի ներկայացման առթիւ։ Անհասկնալի կը թուի որ բնաւ քաղաքական նշանակութիւն չունեցող սոսկ երաժշտական գործ մը այս աստիճան կիրքերն յուզած լինի ֆրանսական քաղաքակրթութեան ոստանին մէջ, որ իրաւամբ կը պարծի գեղարուեստից ոստան լինելուն համար։ Երբ հեծելազօրաց գումարտակներ եւ ոստիկանութեան ամբողջ պահակազօրքն ի զէն կոչել հարկ կը լինի, որպէս զի երաժշտական անմեղ հատուածներու շարք մը խաղաղապէս կարենայ նուագիլ Փարիզի Օբերային մէջ, պէտք է խոստովանիլ թէ ֆրանսական ժողովրդեան մէկ մասին միտքն հաւասարակշիռ վիճակի մէջ չէ։ Բայց նոյն իսկ գերմանական և աւստրեան լրագիրք կը գովեն ֆրանսական կառավարութեան արիութիւնն և զգուշութիւնն, որով ամէն անպատեհութեանց առաջքն առնուլ յաջողեցաւ։

Ցոյց տալու համար թէ Լօհէնկրին քաղաքական նշանակութիւն չունի, նիւթն համառօտիւ նշանակենք։ Լօհէնկրին առնուած է գերմանական և ֆրանսական արդի ժողովրդոց նախահայրերուն օրով պատմուած առասպելներէ։ Նիւթն, այս կերպիւ, սոսկ գերմանական չէ, այլ և ֆրանսական է, հին ֆրանսական, գալլիական։

Պրապանցի Էլզա օրիորդն ամբաստանեալ է իւր կրտսեր եղբօր սպանման գործին մէջ։ Պիտի դատապարտուի, և իւր ստացուածք և կալուածք պիտի տրուին ամբաստանողին, Թէլրամունդցի Ֆրետերիկին, եթէ ոմն չգայ պաշտպանել իւր դատ, սուր ի ձեռին։ Էլզա կ'ակնկալէ խորհրդաւոր փրկիչ մը, որ տեսիլքի մէջ իրեն խոստացուած է։ Եւ սա կ'երեւի՝ կարապի մը քաշած նաւակին մէջ։ Այս է նոյն ինքն Լօհէնկրին ասպետն, որ կը ստանձնէ Էլզայի դատն, և կը յաղթէ հակառակորդին, զոր կը ջախջախէ։ Պիտի ամուսնանայ Էլզայի հետ, բայց մէ՛կ պայմանաւ. — Երդում ընել կուտայ Էլզայի թէ երբեք չպիտի հարցունէ իմանալ թէ ո՛վ է իւր ազատիչ, ուստից կուգայ, և ինչ է իւր բուն անուն։ Էլզա կը խոստանայ։ Բայց երբ Էլզա իւր երջանկութեան ծայրագոյն կէտն հասած է, հակառակորդ կին մը իւր հետաքրքրութիւնը կը շարժէ, որպէս զի արգիլեալ բանն հարցունէ իմանալ։ Էլզա հետեւապէս կը դրժէ իւր խոստման Լօհէնկրինի, յայտնած լինելով թէ ինք ո՛վ է, այլ եւս չի կրնար Էլզայի քով մնալ, պէտք է մեկնի, և կը մեկնի, ըստ օրինաց Կրաալի ասպետական կարգին, որուն անդամ է։ Կը մեկնի՝ կարապին քաշած նոյն նաւակաւն որ վերադարձած է։ Կրաալի գաղտնիքն է նուիրական անօթն, որոյ մէջ ամփոփուած էր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի թանկագին արիւնն, և որ յանձնուած էր այն ասպետաց պահպանութեան, որոց թագաւորն էր Փարսիֆալ, Լօհէնկրինի հայրը։

Տեսակ մը արգիլեալ պտուղի ճաշակմամբ, կինն իւր երջանկութիւնը կը կորուսանէ. — Այս է բարոյականն այս հին առասպելին, որ Վակների ներշնչած է իւր գեղեցկագոյն նուագներէն մի քանին։

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԱՐՔԻԴՈՒՔՍԸ

Կը յիշէ՞ք Ֆրանց Եօզէֆ կայսեր գերդաստանին այն հանճարեղ անդամն, Յովհան Սալվաթոր արքիդուքսն, որ, անկախ բնաւորութեան տէր, չհանդուրժելով վարչական և զինուորական ինչ ինչ կանոնաց խստութեան, հրաժարած էր ո՛չ միայն աւստրեան բանակէն այլ և կայսերական գերդաստանին անդամակցութենէն և անունը փոխելով, իբրեւ պարզ նաւապետ ապրուստ ճարելու հետամուտ եղած էր, և տարիէ մ'ի վեր կը կարծուէր թէ իւր առագաստանաւով կորած լինէր Խաղաղական Ովկէանու մէջ։

Արդ, Վիէննայի Իրազէկ [illegible] լրագրին խօսքին նայելով, ասպետական ժամանակներէն մնացեալ այս արկածախնդիր կայսերազուն կորած չէ եղեր։ Կայսերական գերդաստանն այնպիսի տեղեկութիւններ ստացեր է որոցմէ կ'երեւի թէ Յովհան Օրթ նաւապետը (Յովհան Սալվաթօր) քաջառողջ է, և մասնակցած է Չիլիի վերջին պատերազմին, կարեւոր դեր մը կատարելով։ Այս դէպքերու սկիզբէն քիչ յառաջ, արքիդուքսն իւր նաւուն մէջ գտնուող 18 աւստրիացիներ ցամաք հաներ է ի Պուէնոս-Այրէս, իւր նաւուն անունը փոխեր է, իւր անունն ալ փոխեր է, և օտարազգի նաւազներ առեր է իւր նաւուն մէջ։ Յետոյ Չիլի գացեր է, և հոգւով ու մարմնով մասնակցեր է վերջին պատերազմին, որոյ ելքը ծանօթ է։ (Ո՞ր կողմն է եղեր, այն չըսուիր։) Արքիդուքսին մայրը դեռ չէ ստացեր 600 հազար մարքի գումարն, որոյ փոխարէն որդին ապահովագրած էր իւր կեանք, և բանալ չէ տուեր նորա կտակն, յորմէ եւս կը մակաբերուի թէ սակաւին ողջ լինելու յոյսը չէ կորած բոլորովին։

ՌՈՒՄԱՆԻՈՅ ԹԱԳՈՒՀԻՆ

Միլանէ հեռագիր մը, Փարիզեան Թերթի մը ուղղեալ, կը ծանուցանէ թէ Օր. Վաքարեսքօ ինքնասպանութիւն փորձեր է սեպտ. 15/16ի գիշերն ի Միլան, ուր արդ կը գտնուի իւր մօր հետ։ Այս յուսահատական որոշում հետեւանք էր Ռումանիոյ Եղիսաբէթ թագուհիէն իւր վերջնական բաժանման։ Համոզուելով թէ այլ եւս հնար չէ ամուսնանալ Ռումանիոյ գահաժառանգին հետ, զոր սիրած և յորմէ սիրուած էր, համոզուելով թէ թագուհին զինք իւր քով պիտի չկրնայ պահել այլ եւս՝ զայս բացորոշակ խոստացած լինելով Կարոլ թագաւորին, նախկին պատուակալ և պատուաւոր օրիորդը փորձեր է, բայց շուտով իւր օգնութեան հասեր են, և կեանքն ազատեր է։

Եղիսաբէթ թագուհւոյն քով գըտուած է այժմ գերման տիկին մը, որ նմանապէս վէպեր գրած և բանաստեղծական ոգւով ստորագրուած հեղինակուհի մ'է, և միանգամայն անձնապէս հիւանդներ դարմանած լինելով յԱրեւելեան Ափրիկէ, քաջավարժ է պէտք եղած խնամքը տանելու հիւանդ թագուհւոյն։

ԴԷՊՔԵՐՆ Ի ՉԻՆԱՍՏԱՆ

Անգլիական և ֆրանսական կառավարութիւնք սեպտ. 6/18ին Լոնտոնի և Փարիզի չինացի դեսպաններուն յանձնեցին համանման ծանուցագրեր, խնդրելով որ Փեքինի կառավարութեան հաղորդեն։ Այս պաշտօնագրերով երկոքին արեւմտեան Տէրութիւնք վերջին անգամ հրաւէր կը կարդան Չինու կառավարութեան որ յապագային առաւել ազդու միջոցներ ձեռք առնու՝ չինական նահանգաց մէջ Եւրոպացւոց դէմ խժդժութեան արարքներու առաջքն առնլու համար։

—Թայմզ կը հաւաստէ թէ կացութիւնն եւս քան զեւս կը ծանրանայ Չինու կողմն։ Եւրոպա եւ Ամերիկա ա՛յն ատեն միայն խիստ միջոցներ ձեռք պիտի առնուն երբ չինական կառավարութիւնն անկարողութիւն ցուցնէ իւր հիւրընկալութիւնը վայելող օտարազգեաց կեանքն և ինչքը պաշտպանելու։ «Փափաքելի էր որ Չին ինքնաբերաբար կատարէր այս գործ, առանց պէտք թողլու օտար Տէրութեանց միջամտութեան։ Շատ ազդու միջոցներ ձեռք առնուլ պէտք է, զի Եւրոպացւոց երկիւղներն այնքան աւելի կը զօրանան որքան չինացի խռովարարք ապահովեալ կը զգան իրենք զիրենք թէ անպատիժ պիտի մնան։ Այս շարժում վտանգ կը սպառնայ ո՛չ միայն Եւրոպացւոց գաղթականութեանց ի Չինաստան այլ և արդի դրութեան։ Չինու կառավարութիւնը օրինակ պէտք է առնու Ճափոնէն, որ յաջողեցաւ ջախջախել անիշխանութիւնը, դիմելով այն միջոցներուն զորս Եւրոպայէն սովրեցաւ։»

—)(51)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԵՐԿՈՒ ԱՆՄԵՂՆԵՐ

ԺԻՒԼ ՄԱՌԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԵԾ ՃԱՄԲԱՅՆԵՐԷՆ

Ստակն՝ այդ սարսափելի ոճրին արդիւնքն էր։ Եւ այս ստակովն էր որ առաւօտուն ճաշած էր. այս ստակին շնորհիւն էր որ առաւօտէն ի վեր այնքան լաւ քնացած էր, այս ստակով էր վերջապէս որ քիչ մը առաջ հաց կերած էր. ստակ՝ որ անմեղի արեամբ թաթաւուած էր։

Տեսակ մը ցնորում ունեցաւ։ Գլուխը կը դեդեւէր, կը դառնար։ Իրեն կը թուէր թէ կը քայքայի եւ աթոռէն վար կիյնայ։

Կորովի ձեռք մը զինք կը բռնէ։

—Ինծի նայէ, պզտի՛կ, կը քնանա՞ս։

Պանդոկապետն էր զինք ցնցողը։

Շարլօ ինքզինքը ժողվեց եւ փորձեց ժպտիլ։

—Այո, ըսաւ։ Հոս այնքան տաք է որ. . .

Ոտքի ելաւ, քիչ մը երերալով։ Դուռը գնաց բացաւ եւ մէկ քանի վայրկեան դուրսը մնաց։ Ցուրտը կը զօրացնէր զինքը։ Ներս մտաւ։

Պանդոկապետն՝ պատրաստուած սեղան մը ցուցուց իրեն.

—Կրնաս երթալ ըսել ընկերներուդ որ ճաշի իջնեն։

Շարլօ վեր ելաւ։ Բրիքէ նոր արթընցած էր։ Իսկ Պարուլի գինովութիւնը կատարելապէս անցեր էր և կը լուացուէր՝ գլուխը սառ ջրով լի դոյլի մը մէջ խոթած։

Հինգ վայրկեան ետքը սեղան նստած էին։

Պարուլի թաւշեայ թիկնոցը ծածկըւած էր. ա՛լ արեան հետքեր չէին տեսնուէր։

Բայց Շարլոյի աչուըները՝ խորհրդաւոր զօրութեամբ մը՝ միշտ յառեալ կը մնային անոր վրայ։

Փորձեց ուտել, բայց իր ստամոքսը բան մը չէր ուզեր ընդունիլ։

—Հաց չե՞ս ուտեր, կ'ըսէր Պարուլ որ կը լափէր։

—Ոչ։

—Անօթի չե՞ս։

—Շատ անօթի չեմ։

—Հիւա՞նդ ես, հարցուց Բրիքէ մտահոգութեամբ։

—Ամենեւին։ Դուք ինծի մի՛ նայիք։

Կը թուէր իրեն թէ այդ ամէն բաներուն վրայ արիւն կար։ Շատ կը փափաքէր Բրիքէին իմացունել, բայց ի՞նչպէս ընէր առանց Պարուլի կասկածն արթնցնելու։

Դաղտաբար անոր երեսը կը նայէր։

Երիտասարդ մարդասպանն այնքան հանդարտ էր, այնքան անխռով կերեւէր որ Շարլօ ինքնին կը հարցունէր.

—Արդեօք ճշմարիտ մարդասպա՞նն է։ Արդեօք չե՞մ սխալիր։

Բայց եթէ չէր սպանած, ո՞ւսկից այդ դրամն։ Ո՛չ, ո՛չ, նա միայն կրնար ըլլալ։

Յետ ընթրեաց, Պարուլ նորէն օղի խմեց։ Ուզեց ստիպել Շարլօն որ իրեն հետեւի, բայց սա ընդդիմացաւ։ Իսկ Բրիքէ համակերպեցաւ աւագին։ Այս բանս զինք կը զարմացնէր։

—Պիտի գինովնա՞ս, կը կրկնէր Շարլօ։

—Բայց ոչ, բայց ոչ, կը յարէր Բրիքէ, լեզուն ծանրցած։

Շարլօ ոտքովը սեղանին տակ կը հրէր զայն, բայց խեղճը չէր հասկնար։ Միշտ կը խմէր, զուարճութիւն զգալով Պարուլի ներկայութենէն և անոր հազար տեսակ յիմարական խօսքերէն։

Այս ընթացքով շուտով սեղանին տակ պիտի գլորէին։

Պանդոկապետն իրենց սենեակը քշեց զանոնք։

Պարուլ հետ տարաւ օղին։

Եւ շարունակեցին խմել։

—Կ'աղաչեմ, Բրիքէ, կ'ըսէր Շարլօ։

—Է՛, ի՞նչ կ'ըսես, պզտիկ Շարլօս։

—Եթէ զիս քիչ մը կը սիրես, ա՛լ մի խմեր։

—Բայց եթէ գինով ըլլամ, կենացս մէջ առաջին անգամն է. մէկուն վնաս չեմ հասցուներ։

—Բայց զիս կը նեղացունես։

—Դուն ալ մեզի պէս գինովցիր։

—Ո՛չ։

Քիչ մը ետքը Բրիքէ ա՛լ ականջ չէր կախեր անոր։ Ա՛լ չէր հասկնար իր բարեկամին կշտամբանքները։ Բառերն այլեւս յոյժ հեռաւոր եւ շփոթ աղմուկի մը պէս կը հասնէին ականջին։

Քնացաւ։

Պարուլ եւս քիչ յետոյ անոր հետեւեցաւ։

Բայց անկողին ելնելու իսկ կարողութիւն չունեցան։ Տախտակամածին վրայ պառկած մնացին, Խռթալ սկսան։

Մինակ Շարլօ մնաց արթուն, անհանգստապէս տխուր։

Ի՞նչ ձեռաց մէջ ինկած էր։ Եթէ արդարութիւնը Պարուլի քով գտնէր զինք, պիտի ամբաստանուէր՝ այս վերջնոյն իբր մեղսակից Մանթի պարտիզպանին սպանութեան մէջ։

Պէտք չէր ալ երկար ատեն հոն մընալ։ Պիտի առնէր քալէր։

Փորձեց զգուշութեամբ արթնցունել Բրիքէն։ Բայց խեղճը տեղէն չի շարժեցաւ։ Վեր վերցուց զայն, գլորեց, խըթեց, օղի սրսկեց երեսին։ Բան մը օգուտ չըրաւ։ Բրիքէ քանի մը անհասկնալի խօսքեր մռլտաց եւ նորէն քունի մէջ թաղուեցաւ։

Շատ կը փափաքէր Բրիքէի հետ խօսիլ. . . մանաւանդ շատ կը փափաքէր ըսել անոր զոր ինչ երեւան հանած էր ինք։

Բայց սոսկումն, մանաւանդ սարսափն աւելի զօրաւոր եղաւ։

Բանի մը տող գիր գրեց և թուղթը սահեցուց Բրիքէի գրպանն։

Այս երկտողիկ կ'ըսէր նա.

«Բրիքէս, խօսք տուր։ Օր մը աւելի բարեկամ ըլլալ չեմ ուզեր Պարուլի։ Այս գիշեր փորձեցի շատ բաներ պատմել քեզի, բայց դուն բան մը չուզեցիր մտիկ ընել։ Մնաս բարով, գիտես երթալիք տեղս։ Մեծ ճամբուն վրայ ջանա՛ ինծ միանալ. եթէ Սէն Ռըմի հասնելէս առաջ ինծի չի գտնես, անգամ մըն ալ բաժնուած պիտի ըլլանք։ Կ'ուզեմ հետս տանիլ Պերթինը, գործ պիտի փնտռենք։ Այս մասին Պարուլի բան մի՛ ըսեր։ Չարասիրտ աղայ մըն է նա։ Զիս պիտի ըսպանէր։ Բայց կը պաղատիմ քեզ, իմ բարի Բրիքէս, ժամ մը անոր հետ մի կենար, ապա թէ ոչ կորսուած ես, այո՛, Բրիքէս, կորսուած ես։»

Պատուհան մը բացաւ։ Տունը ցած էր։ Խողովակէ մը սահելով վար իջաւ եւ մեծաքայլ հեռացաւ։

Վայրկեան մը ետք, երբ դէպի տունն դարձաւ, ա՛լ բան մը չի տեսաւ. մթութեան մէջ անհետ եղած էր այն։

Հառաչեց՝ Բրիքէի վրայ մտածելով։ Նշմարած էր որ խեղճը Պարուլի դիւրաւ հնազանդելու միտում մը ունէր։ Սա կը հրամայէր և Բրիքէ կը հնազանդէր՝ չէ թէ երկիւղէ, այլ տեսակ մը սքանչացումէ դրդեալ։ Պարուլ՝ Բրիքէի ամէն չունեցածն ունէր. ուժ և գեղեցկութիւն. հետեւապէս Բրիքէի համար Պարուլ գերագոյն էակ մըն էր։ Բնական էր որ անոր հրամայէր։

Շարլօ, քունէն կազդուրուած և ինքզինքը Պարուլի ազդեցութեան ներքեւ հըզգալուն գոհ, իր փախստեան առաջին վայրկեաններուն չի նշմարեց որ ստամոքսը բողոք կը բառնար։

Ձիւնը դադրած էր, ամպերը ցրուած էին. լուսինը կը պսպղջէր յոյժ վճիտ, և սաստիկ ցուրտն արդէն սկսած էր իր ոտից տակ ճարճատեցնել մաքուր և սպիտակ ծածկոյթն։

Որովհետեւ շատ շուտ կուզէր հասնիլ Սէն Ռըմիի շրջակայքները, չէր կրնար կանգ առնուլ գործ գտնելու համար։

Շատացաւ ճամբուն երկայնութեամբ ագարակէ ագարակ մուրալով։ Իր սիրուն եւ շահեկան դէմքն ուշադրութիւն կը գըրաւէր. շատ քիչ անգամ կը վռնտուէր. ախոռի մը, շտեմարանի մը մէջ կը պառկէր։ Շատ հոգը չէր։ Երկար ժամանակէ ի վեր,—գրեթէ միշտ—,սովորած էր թշուառութեան տաժանելի կեանքին և ինքզինքը երջանիկ կը համարէր, քանի որ ազատ էր։

Ահա այսպէս անարգել հասաւ ի Սէն-Ռըմի։

Չի համարձակեցաւ անմիջապէս գիւղ երթալ, ուր գործաւորներ կրնային զինք ճանչել։ Գործարանին շրջակայքները դեգերեցաւ, հեռուէն դէպ իրեն եկող մէկը տեսնելուն պէս շուտ ընդ փոյթ հեռանալով։

(Շարունակելի)

ՈՂՈՂՄՈՒՆՔ Ի ՍՊԱՆԻԱ

Սպանիացի վեհանձն ժողովուրդն ամենայն մարդասիրութեամբ և առատաձեռնութեամբ նպաստներ կը հասցնէ Թոլէտոյի և Ալմէրիայի նահանգաց ողողումներէն տառապեալ ժողովրդեան, որոյ աղէտքն հեռագիրք ծանուցին արդէն։ Այս նպաստներով կրնան քիչ շատ դարմանուիլ նիւթական վնասք, որք շատ մեծ են, քանի որ ամբողջ քաղաքներ, աւաններ և գիւղեր ողողուած և կործանած են կարկուտի և անձրեւի փոթորկին և ջուրց հոսանքին սաստկութենէն։ Բայց դժբախտաբար անդարմանելի կորուստք եւս մեծ են, քանի որ արդէն հարիւրներով կը համրուին ջուրց մէջ խեղդուած կանայք, տղայք, ծերք, նոյն իսկ չափահաս մարդիկ։ Տեղ տեղ ժողովրդեան անհոգութիւնն աւելի եւս սաստկացուցած է աղէտը։ Գետեզերեայ տեղեր ողողումներ շատ անգամ կը պատահին, և մեծ վնաս չեն պատճառեր։ Այս անգամ ևս ժողովուրդը տեղ տեղ այնպէս կարծեր է, և հակառակ քաղաքապետի, գիւղապետի և ոստիկանութեան յորդորանաց, որք լսելով թէ ամեն հովիտք յորդած են և ջուրերն ամենայն ուժգնութեամբ դէպ ի գետը կ'ուղղուին, վտանգին մեծութիւնը գուշակած և օր յառաջ ազդարարած էին ժողովրդեան, բայց շատեր իրենց տեղէն շարժել չուզեցին, և նոյն գիշերն իսկ երբ ամենայն անհոգութեամբ կը քնանային, իրենց տուներ ջրով լեցան, և մինչեւ անգամ լողալ գիտցողներ չկրցան բուռն յորձանքին դիմակալել։

Աղեխարշ տեսարան կը պարզէին մայրեր որք իրենց զաւակները, պառաւներ որք իրենց թոռնիկները գրկած կը տարուբերէին ահեղաձաւունչ կոհակաց վրայ, որք ամեն բան կը քշէին կը տանէին, և անլսելի կը թողէին խեղճ ընկղմելոց յուսահատական աղաղակները։ Բայց մինչեւ իսկ եթէ լսուէին այն աղաղակներ, որո՞ւն ձեռքն էր օգնութիւն հասցնել։

Քրիստինէ մայր-թագուհին ուզեց անմիջապէս արկածելոց քով երթալ․ բայց նախարարք թող չտուին, զի երկաթուղի չկայ այն կողմ, և ճամբաներն անանցանելի դարձած են ողողումներէն։ Այնու հանդերձ, քաջասիրտ թագուհին, ո՛չ միայն դրամով նիւթապէս այլ և իւր ներկայութեամբ բարոյապէս մխիթարելու համար տառապեալները, պատրաստութիւններ կատարել կուտայ իւր արքունի պաշտօնատարաց, Թոլէտոյի և Ալմէրիայի աւերումները մօտէն տեսնելու համար։

Պետական նպաստներէն զատ, լրագիրք հանգանակութիւններ բացած են, որոց հասարակ ժողովուրդն անգամ առատութեամբ կը մասնակցի, և հարուստ դասք իրարու հետ կը մրցին ըստ կարի մեծաքանակ և արագափոյթ օգնութիւն հասցնելու համար։

ԱՆԾՈՒԽ ՎԱՌՕԴ

Գերմանական ԺԱ զօրաբանակն և Դ․ զօրաբանակն իրարու դէմ ճակատեցան մերձ ի Միւլհաուզէն, և ճակատամարտ մը ձեւացուցին, սեպտ․ 5/17ին, ընդ ուղղակի դիտողութեամբ Վիլհէլմ կայսեր։ Արագաշարժութիւնն որով զօրաց կարգերը մի զմիոյ կնի կը յարձակէին իրենց կէտ նպատակի ցուցուած բարձրութեան վրայ, բոլոր մասնագէտ դիտողաց ուշադրութիւնը գրաւեց։ Թէեւ 60,000 զօրք յարձակողաբար կամ պաշտպանողաբար անընդհատ կրակ ըրին իրարու դէմ, թէեւ թնդանօթներն եւս հրացաններուն պէս անընդհատ կրակ ըրին, բայց օդը պայծառ մնաց միշտ, շնորհիւ գործածուած անծուխ վառօդին։ Երիտասարդ կայսրը, զոր վերջերս Փարիզեան լրագիրք հիւանդ կը ցուցնէին, ամենայն կորովով և աշխուժիւ մէկ կէտէն միւսը կը վազէր կ'երթար ձիով, պատերազմող կողմանց մէն մի կարեւոր շարժումը մօտէն դիտելու համար, և յետոյ իր քով կանչելով զօրապետներն, իւր խորհրդածութիւններն ըրաւ երկարօրէն։

Բ․ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԼՕՀԷՆԿՐԻՆԻ

Լօհէնկրինի Բ․ ներկայացումն հանդարտ անցաւ ի Փարիզ։ Ա․ ներկայացման դէմ ցոյց ընելու համար հաւաքուած 10 000 հոգիէն գրեթէ ո՛չ ոք երեւցաւ։ Աղաղակ մը անգամ չլսուեցաւ Օբերային առջեւ։ Իրաւ է որ երբ Փրանսացի ժողովուրդը կառավարող հզօր ձեռք մը տեսնէ՝ գիտէ խոնարհիլ։

* * *

Առջի օրուան ձերբակալելոց մէջ կայ մարդ մը որոյ անունն է Ռէմի Ֆասօլ։

Բայց այս մարդը սիրելու էր երաժշտութիւնը։ ([illegible])

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍՐ

Վիլհէլմ կայսեր մօրուք թող տալն, որ զինք տեսնել փափաքող համակիր ժողովրդեան հետաքրքրութիւնը կը շարժէ մեծապէս, բնաւ չյարմարեցաւ լուսանկարիչներուն շահուն, որք անմօրուս կայսեր լուսանկարն այլ եւս չեն կրնար ծախել, եւ առ նուազն 250 հազար Ֆր․ի արժողութեամբ լուսանկար կայ Վիլհէլմ կայսեր՝ անմօրուս։

Այս առաւօտեան սուրհանդակաւ առնուած լրագիրք կը ծանուցանեն թէ ռուսեւաֆղանեան սահմանագլխոց վրայ ռուս և աֆղան զօրաց միջեւ ընդհարում մը զրոյց թէեւ ելած է, և թէպէտ այս պատճառաւ Սակարանի մէջ գիներն ինկած են քիչ մը, բայց պաշտօնական տեղեկութիւն մը չէ առնուած, և հաւատալի չի թուիր։

—Թէեւ Մենելիք թագաւոր ինքզինք Իտալիոյ հովանաւորութեան ենթարկեալ չի նկատեր, և ուղղապէս կը թղթակցի եւրոպեան Տէրութեանց հետ, բայց դէթ Անգլիա Իտալիոյ իրաւունքը կը ճանչէ։ Մենելիք թագաւորին կողմէ ընդունած մէկ նամակին Վիքթորիա թագուհին պատասխանեց՝ իւր նամակը ղրկելով ի ձեռն Իտալիոյ կառավարութեան։

—Ռուսիա ա՛յն պատճառաւ կրաւորական դիրք մը կը բռնէ Չինու քրիստոնէից ջարդին խնդրոյն մէջ, որովհետեւ կը կասկածի թէ ինք գործօղութեան մը ձեռնարկելուն պէս արեւմտեան Տէրութիւնք զինք մինակ պիտի թողուն, և ինք միայն պիտի գժտի Փեքինի կառավարութեան հետ։ Ուստի ջերմութեամբ չի ստանձներ խնդիրն։ Եւրոպեան Տէրութեանց անհամաձայնութիւնն միշտ այսպիսի հետեւանք կուտայ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն․ Ս․ Պատրիարք Հայրն երէկ Սպարապետի Դուռը գնաց, և այցելութիւն տալով Սպարապետ Րիզա փաշայի, շնորհաւորեց Ն․ Բարձրութեան Միւշիրութեան աստիճանի բարձրացումը։

Ամեն․ Ս․ Պատրիարք Հայրն երէկ հանգուցեալ Յակոբ փաշայի բնակարանը գնաց ի Եէնիգիւղ և ցաւակցական այցելութիւն տուաւ հանգուցելոյն մօրը, եղբօրն ու քրոջը։

Բարձր․ Մեծ-Եպարքոսն և Բարձր․ Սպարապետն իրենց այցետոմսերը ղրկած են առ Ամեն․ Ս․ Պատրիարք Հայրն, որ շնորհաւորական այցելութիւն տուած էր Նոցին Բարձրութեանց։

Նոյնպէս պարսկական դեսպան Իսատուլլահ խան իւր այցետոմսը ղրկած է առ Ս․ Պատրիարք Հայրն։

Ասկէ առաջ Պատրիարքարանի կողմէ շրջաբերական մ'ուղղուելով ամեն կողմ, յանձնարարուած էր տեղեկագրել թէ իւրաքանչիւր վիճակի մէջ քանի՛ կնաթող այրեր և քանի՛ այրաթող կանայք կան։

Պաղտատու առաջնորդական տեղապահը պատասխանելով այդ շրջաբերականին, տեղեկագրած է Ազգ․ Պատրիարքարանին թէ իւր վիճակին մէջ ո՛չ կնաթող այր կայ և ոչ ալ այրաթող կին։ Առաջնորդական տեղապահը միայն հետեւեալ պարագայն տեղեկագրած է։ Բնիկ Պարսկաստանցի Կարապետ Մելիքեան անուն անձ մը, որ բազում տարիներ առաջ Պաղտատի մէջ ամուսնանալով երկու զաւակներ ունեցած էր, տասը տարիէ հետէ կինն ու զաւակները թողլով՝ Պարսկաստանի Քիրմանշահ քաղաքը գնացեր է։ Վերջերս լսելով որ այդ անձ մտադիր է վերստին ամուսնանալ ուրիշ կնոջ մը հետ, Պաղտատի առաջնորդական տեղապահը գրեր է Քիրմանշահի պարսիկ կառավարչին որ նախ արգելու այդ ամուսնութիւնը, քանի որ կինը կենդանի է, և յետոյ պահանջէ տասը տարուան պարէն կնոջն ու զաւակացը համար։ Վերջին անգամ լուր եկեր է ի Պաղտատ թէ Կարապետ Մելիքեան բանտարկեալ է ի Քիրմանշահ և պարտի վճարել պահանջեալ պարէնն եւ կամ Պաղտատ երթալ ընդ հսկողութեամբ։

Երեկուան Սաադէթ-ի մէջ կը կարդանք․

«Վսեմ․ Յակոբ փաշա՝ իւր կենդանութեանը յայտնած էր առ Վսեմ․ Արիֆ էֆէնտի Ունճեան, թէ մտադրութիւն ունի օրին մէկը դպրոց մը կառուցանել Բանկալթիի Հայոց գերեզմանատան մէջ։ Կ'իմանանք թէ հանգուցելոյն ընտանիք ի գործ պիտի դնեն նախարարին այս խորհուրդը։»

Թիֆլիզի լրագիրք կը ծանուցանեն թէ օգոստոս 22ին Թէհրանի մէջ վախճաներ է պարսկական նախարար հայազգի Ջհանկիր Խան Էնիկօլօբեան, ի հասակի 66 ամաց։

Հանգուցեալը եղբայրն էր Վիէննայի պարսկական դեսպան Նարիման Խանի։

Թիֆլիզի Հրատարակչական ընկերութիւնն, որ Պարոնեանի Մեծապատիւ Մուրացկանները հրատարակած էր, 100 րուբլի ղրկած է։ Այս դրամ Պարոնեանի ընտանեացը յանձնուած է յատուկ մասնաժողովին կողմէ։ Մասնաժողովն առաջ կը տանի հանգանակութեան գործը և կը յուսանք թէ արդէն վաթսուն ոսկւոյ գումար մը հաւաքած է։

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ

Լրագրոյս մամուլը դրուած պահուն, միջօրէին, կը տեղեկանանք թէ նորընտիր Քաղաքական Ժողովն այս առաւօտ մեծամասնութեամբ ի նիստ գումարուելով Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, ընդ նախագահութեամբ Ամեն․ Ս․ Պատրիարք Հօր, իւր դիւանը կազմեր է հետեւեալ կերպով․

Ատենապետ	Սիմոն պէյ	Մաքսուտ
Դէր-Ատենապետ	Տիգրան էֆ․	Եուսուֆեան
Ատենադպիր	Յովհաննէս »	Թորոսեան
Դէր-Ատենադպիր	Ռեթէոս »	Պէրպէրեան

Քաղ․ Ժողովոյ անդամներէն Սահփան փաշա պնդած է իր հրաժարականին վրայ։

Մանրամասնութիւնք վաղուան թուով։

Գազազեան, Տէրունեան, Սրովեան եւ Սամանճեան ընտանիքներն հրապարակաւ իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն ամեն անոնց որք ներկայ գտնուելով ՅԱԿՈԲ ՓԱՇԱՅԻ յուղարկաւորութեան եւ թաղման տխուր հանդիսին, պատուեցին հանգուցելոյն յիշատակն եւ իրենց ցաւակցական զգացմանց հաւաստիքն արտայայտեցին։

Ազգանուէր հայուհեաց ընկերութիւնն եւս շքեղ ծաղկեպսակ մը դրած էր հանգուցեալ Յակոբ փաշայի դագաղին վրայ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Փոխանորդարան Ազգ․ Պատրիարքարանի

Ինչպէս ծանուցուած էր արդէն Պատրիարքութեան Հայոց Դպրեվանուց Պատ․ Խնամակալութեան կողմէ, յառաջիկայ Խաչվերացի տօնին առթիւ ի գործ դրուած են ամենայն նախապատրաստութիւնք և կանխահոգ զգուշութիւնք, որպէսզի Արմաշու Չարխափան Ս․ Աստուածածնի վանքն յուխտ եւ երկրպագութիւնն դիմող բարեպաշտ ազգայինք կարենան երթեւեկել անդորրութեամբ և վանուց մէջ հանգիստ օթեւան գտնել։

Բաց աստի, Հայտար Փաշայի երկաթուղեաց Տնօրէնութեան հետ բանակցութեամբ կատարուած են նաեւ հարկ եղած կարգադրութիւնք՝ որովք ցամաքի ճամբով երթալ փափաքող ուխտաւորք պիտի վայելեն ուղեւորութեան մասին պէտք եղած բոլոր դիւրութիւններն։ Հետեւաբար բարեպաշտ ազգայինք կրնան ամենայն անդորրութեամբ և հանգստութեամբ կատարել իրենց ուխտն ըստ ջերմեռանդն բղձից իւրեանց։

7 Սեպ․ 1891 (Կնիք) 3—3

Պատրիարքարան
Հայոց Կ․ Պոլիս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԶԴԱՐԱՐԱԳԻՐ

Տպագրական Տեսչութեան

Յունարէն [illegible] և հայերէն Արեւելք լրագիրներն իրենց վերջին թիւերէ միոյն մէջ ծանուցած էին թէ Ալթը Մերմէրի կողմը երկու հրեայ՝ վեց տարեկան յոյն տղայ մը պարկի մը մէջ դրած և տարած ատեննին ձերբակալուեր են։ Ոստիկանութեան Նախարարութեան կողմէ կատարուած քննութեամբ հաստատուած է թէ այդ լուր բոլորովին անհիմն է։ Հետեւաբար այդ լուր կը հերքուի։ Տպագրական Տեսչութիւնը նկատելով որ, մինչդեռ քանիցս ազդարարուած է առանց քննութեան ո և է լուր չի հրատարակել, սակայն երբեմն այդ կարգի անհիմն դէպքեր յիշելով կը հրատարակուին, բացարձակապէս կը ծանուցանէ բոլոր լրագրաց արտօնատէրերուն՝ թէ յետ այսորիկ այդ կարգի սուտ լուրեր հրատարակող լրագիրք անմիջապէս դադարման պիտի դատապարտուին։

«ԻՖԹԻԽԱՐԻ» ՇՔԱԴՐԱՄ

Իֆթիխարի շքադրամ տրուեցաւ կայս․ պալատան բժիշկներէն Փէշտիմալճեան Վսեմ․ Տիգրան փաշայի, ապայակոյտի հազարապետներէն Սուպհի պէյի և Գերմանիոյ Ստուտկարտ քաղաքին մէջ դիտակի վաճառական Պ․ Թէոտոր Հօրթքօրնէի։

Ի ԿԱՅՍ․ ՊԱԼԱՏ

Բարձր․ Մեծ-Եպարքոսն երէկ առաւօտ կայս․ պալատ գնաց և վեհ․ Սուլթանի հրամաններն ստանալով Բ․ Դուռը դարձաւ։

Ի Բ․ ԴՈՒՌՆ

Ռուսական դեսպան Պ․ Նէլիտոֆ երէկ Բ․ Դուռն երթալով, յաջորդաբար տեսակցեցաւ Բարձր․ Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ․ Նախարարին և Վսեմ․ Խորհրդականին հետ։

—Ռումանական դեսպան Պ․ Միթիլինէօ, որ ի մօտոյ մայրաքաղաքէս պիտի մեկնի արձակուրդով, երէկ Բ․ Դուռը գնաց և տեսակցելով Բարձր․ Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ․ Նախարարին և Վսեմ․ Խորհրդականին հետ, իւր հրաժեշտի ողջոյնը մատոյց։

ԵԼՄՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երէկ, Ելմտական պաշտօնատան մէջ յանձնաժողով մը ի նիստ գումարեցաւ ընդ նախագահութեամբ նախարար Նազիֆ էֆէնտիի և անդամակցութեամբ նոյն նախարարութեան գլխաւոր պաշտօնէից։ Յանձնաժողովը խորհրդակցութիւններ կատարեց ելմտական ինչ ինչ խնդրոց վրայ։

—Ռուսական դեսպանատան առաջին թարգման Պ․ Իվանոֆ երէկ Ելմտական պաշտօնատունը գնաց և պահ մը տեսակցեցաւ նախարար Նազիֆ էֆէնտիի հետ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐՔ

Մեծ-Եպարքոս Բարձր․ Ճէվատ փաշա ուզելով առեւտրական դաշնագրոց խնդրոյն կարեւորութեանն անձամբ և մանրամասն կերպով գիտակ ըլլալ, հրամայած է որ, բանակցութիւններն սկսելէ առաջ, դաշնագրաց վերանորոգման վերաբերեալ ամեն ինչ իրեն ներկայացուի։

* * *

Յայտնի է թէ Թուրքիոյ և Ռումանիոյ միջեւ առեւտրական առժամեայ դաշնագիր մը գործադրութեան դրուած է, ցկնքումն վերջնական դաշնագրոյն։ Բ․ Դուռը ծանուցած է ռումանական կառավարութեան որ առժամեայ դաշնագիրը ժամանակ մը եւս գործադրութեան մէջ մնայ։ Ռումանական կառավարութիւնն եւս ի պատասխանի առաջարկած է որ մինչեւ որ եւրոպական կառավարութեանց հետ իւր կնքած առեւտրական դաշնագրոց պայմանաժամն աւարտի, առժամեայ դաշնագրոյն կնքումէն առաջ ի գործադրութեան եղած մաքսային սակագնոց տրամադրութեանն համաձայն շարժուի։ Ձեռնհաս իշխանութիւնն այս առթիւ խորհրդակցութիւններ կը կատարէ։

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՄ

Կրէտէի պաշտօնական լրագրոյն մէջ կը կարդանք թէ տասներեք յոյներ, որք կղզւոյն զինուորական ատեանին կողմէ դատապարտուած էին, կայսերական ներման արժանացեր են։

ՀԱՆՐՕԳՈՒՏ ՇԻՆՈՒԹԻՒՆՔ

Հանրօգուտ շինութեանց Նախարարութիւնը, կ'ըսէ Սապահ, ինչ ինչ պատճառներու և օրինական արգելքներու համար, որոշեր է չտալ այն մենաշնորհն, զոր Եահեա Հայաթի փաշա ու ընկերք խնդրած էին Զմիւռնիոյ մէջ ելեկտրաշարժ թրամուէի գիծ մը հաստատելու համար։

—Հանրօգուտ շինութեանց ճարտարապետներէն Գէորգ էֆէնտի Արսլան ու Զէրքէսեան էֆէնտի և ապայակոյտի երկու սպայք ինչպէս նաեւ Պ․ Բաուլայի կողմէ կարգեալ պաշտօնեայք ի մօտոյ պիտի երթան քննել մինչեւ Տիարպէքիր շինուելիք երկաթուղւոյն Էնկիւրիի ու Սեբաստիոյ ճիւղերը։

—Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան պաշտօնեաներէն Զէրքէսեան էֆէնտի ու Էմին էֆէնտի երէկ գնացին չափել ու քննել Պիլէճիկէն Լէֆքէ շինուած երկաթուղւոյ գիծը։

—Կայս․ անձնապահ զօրաբանակին հրամանատար Րէուֆ փաշա արտօնութիւն խնդրած է Ուզուն Քէօբրիի մէջ շաքարի գործարան մը հաստատելու համար։ Պետական Խորհուրդը կը քննէ այդ խնդրոյ վերաբերեալ գրութիւնները։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբեր 8էն մինչեւ 9, Հալէպի մէջ հնտախտի ո եւ է դէպք ու մահ չէ պատահած։ Սեպտեմբեր 7ին Այնթապի մէջ հնտախտէ վեց մահեր պատահեր են։

—[illegible] շոգենաւն, յորում կը գտնուէին Հիճազէն եկող ուխտաւորք, շաբաթ օրը մայրաքաղաքս ժամանած էր և բժշկական քննութեամբ հաստատուած ըլլալով որ ուխտաւորաց միջեւ տարափոխիկ հիւանդութիւն չկայ, ցամաք հանուած էին։ Ուխտաւորներէ մին՝ անատոլուցի Հաճի Մուսթաֆա, աստ ոչ ոք ունենալով և ինքն ալ փորհարութենէ բռնուած ըլլալով, ի Ղալաթիա Զէյնէ Մէյտանը ջրավաճառ Օսմանի տունը հիւրընկալուեր է։ Զինքը դարմանելու համար օտարազգի բժիշկ մը կոչուեր է, որ յայտարարեր է թէ այդ հիւանդութիւն հնտախտ է։ Ասոր վրայ խնդիրը ոստիկանութեան կողմէ իմացուելով, կիրակի օրն այդ տունը պաշարման ներքեւ առնուեր և առողջապահական ընդհանուր քննիչ Տօքթ․ Քօչինի այդ տունը փութալով հիւանդը քններ և տեղեկագիր մը տուեր է թէ հիւանդութիւնը հինցած փորհարութիւն է։ Սակայն այս լուր այդ կողմը տարածուելով ժողովրդեան մէջ սրտայուզութիւն տիրեր է․ ուստի ժողովրդեան միտքը հանդարտեցնելու և ամեն կասկած փարատելու համար երէկ բժշկական վարժարանէն գնդապետ Յակոբ պէյ ու գեր-գնդապետ Բասիմ պէյ կը հրաւիրուին, որոց կ'ընկերանան նաեւ առողջապահական քննիչ Վիթալիս էֆէնտի, Տօքթ․ Սթէքուլի ու Տօքթ․ Բանայօթ պէյ։ Այս բժիշկներ նոյն տունն երթալով հիւանդը կը քննեն և կը յայտարարեն թէ հիւանդութիւնը հնտախտ չէ այլ աղիներթութիւն և փորհարութիւն եւ թէ հարկ է այդ մարդն հիւանդանոց փոխադրել։

—Նիկոմիդիոյ տեղական կառավարութիւնն իմանալով որ Տէյիրմէն Տէրէի ու շրջակայ մէկ քանի գիւղերու մէջ տեսակ մը հիւանդութիւն երեւան ելած է, թաղապետական բժիշկը անդ ղրկեր է։ Բժիշկը հիւանդները քննելով հաստատեր է թէ այդ հիւանդութիւն տեսակ մը տենդ է, որ յառաջ եկած է մօտը գտնուած բրնձի արտերէն։

ՍԵՐՊԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Սերպ կառավարութիւնը Բ․ Դրան հաւանութիւնը խնդրեր է զօրավար Սավա Կրուիչի Կ․ Պոլսոյ սերպիական դեսպան անուանման համար։

ՆԱՒԱՅԻՆ ԱՐԿԱԾ

Լոյտի գործակալութեան հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ այդ ընկերութեան պատկանող [illegible] շոգենաւը խրեր է Կէլլիպօլուի առջեւ։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ապահովագրական ընկերութիւն մը կազմելու համար Եէնիտիւնիա Տիմիթրաքի էֆէնտիի, Պ․ Պոտուլի և Թէրնօ պէյի կողմէ մատուցուած առաջարկն ընդունուեր է Պետական Խորհրդէն։ Արտօնութեան վերաբերեալ թուղթերը Բ․ Դրան ղրկուած են։

ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆՔ

Ծովային առեւտրական դատարանը օգոստոս 20էն սնանկացեալ հռչակած է վաճառական Նշան Ս․ Անտոնեանն, հաստատեալ ի Ղալաթիա Համտի Փաշա խան։ Դատարանին օգնական անդամ Եանքօ էֆէնտի հաշուեքննիչ դատաւոր կարգուած է և փաստաբան Արթիւր էֆէնտի Մաղաքեան առժամեայ «Սէնտիք»։ Դատարանը նոյնպէս որոշած է բանտարկել սնանկացեալը։

Պ․ ՊԱՐՈՍ

Անատոլուի Երկաթուղեաց ընկերութեան տնօրէն Պ․ Բիւլմանի հրաւիրանօք, Հունգարիոյ առեւտրական նախարար Պ․ Պարոս կիրակի օրը պտոյտ մը կատարեց Անատոլուի երկաթուղեաց գծին վրայ, ուր մասնաւոր կառախումբ մը իր տրամադրութեան ներքեւ դրուած էր։ Աւստրիական դեսպանատան շոգենաւակով Հայտարփաշա գացին Պ․ Բիւլման և իր հրաւիրեալք․ Պ․ Պարոսի կ'ընկերանային մէկ քանի բարեկամներ։ Առաւօտեան ժամն երկուքին կառախումբը ճամբայ ելաւ դէպ ի Նիկոմիդիա, ուր Հունգարացի նախարարը այցելեց Թէօքէլի անուն նշանաւոր հունգարացւոյն շիրիմը։ Կարճ դադարէ մը ետքը, պտոյտը շարունակուեցաւ մինչեւ Կէյվէ, ուր Պ․ Բիւլման նախաճաշ մը տուաւ իր հրաւիրելոց։ Պ․ Պարոս բաժակ պարպեց ի զարգացումն Անատոլուի երկաթուղեաց։

Իրիկուան, Պ․ Պարոս Կ․ Պոլիս դարձաւ միեւնոյն կառախումբով և ժամ մը ետքը մեկնեցաւ մայրաքաղաքէս՝ արեւելեան երկաթուղեաց մասնաւոր կառախումբով մը ի Վիէննա։

ՔԵԶԱՊՃՐՕՂԼՈՒԻ ԳՈՐԾԸ

Սնանկացեալ հրեայ վաճառական Քեզապճը օղլուի Լոնտոնի մէջ ունեցած բոլոր պարտապահանջներուն և Կ․ Պոլսոյ պարտապահանջներուն ալ մեծագոյն մասին հաւանութեամբ, անցեալ օգոստոս ամսոյ 21ին իրաւախոհութիւն մը գոյացաւ իտալական հիւպատոսարանի դատարանին առջեւ, և այս իրաւախոհութիւն վաւերացաւ օգոստոս 31ի դատավճռով, որ հրատարակեցաւ սեպտեմբեր 3ի նոտին մէջ։

Ըստ այս իրաւախոհութեան, Կ․ Պոլսոյ Լեվի Ֆրաթելլի և Լոնտոնի Լեվի եղբարց վաճառատունք իրենց պարտապահանջներուն կը վճարեն իւրաքանչիւրը երեք ամսուան մէջ հինգ անգամէն հարիւրին $31\frac{1}{2}$ բաժին մը՝ երաշխաւորութեամբ Պ․ Աբրահամ Լէվիի, որ հրապարակի վրայ պատուաւոր անուն ունի։

Ի վերջ այս իրաւախոհութեան, Կ․ Պոլսոյ և Լոնտոնի երկու վաճառատանց գոյքերն ու պատրաստ դրամը երաշխաւորին տրամադրութեան ներքեւ պիտի դրուին՝ հաշուեյարդարութեան համար։

ՍԹԱՐԽ ՓԱՇԱ

Նաւային Ֆէրիք գերմանացի Սթարխ փաշա արտօնութիւն խնդրած է իւր հայրենիքը վերադառնալու համար, որովհետեւ թէ՛ իւր պաշտօնավարութեան պայմանաժամն աւարտած է և թէ Պոլսոյ կլիման չէ յարմարած իւր կնոջ առողջութեան։ Ըստ այսմ, եթէ կայս․ Իրատէն ելնէ Սթարխ փաշա ի մօտոյ պիտի մեկնի մայրաքաղաքէս։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Թէեւ երէկի [illegible] ի լրոյ կը ծանուցանէ թէ Պետական Խորհրդոյ անդամ Նշան էֆէնտի Սէֆէրեան Երկրագործական Դրամատան տնօրէն անուանուած է, սակայն Թագվիմի Վէքայիին այսպիսի անուանում մը հրատարակած չէ պաշտօնապէս։

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆՔ

Ներքին գործոց նախարարութիւնը շրջաբերականաւ մը բոլոր գաւառաց հաղորդած է կայս․ Իրատէ մը, որ հետեւեալ միջոցները կը հրամայէ երբեմն պատահած աւազակութեանց դէպքերու առաջքն առնելու համար․

Ա․ Ամենայն ուշադրութեամբ ի գործ դնել նախապէս ելած կայս․ այն Իրատէն, որ կը հրամայէր հաւաքել ու գրաւել ժողովրդեան ձեռքը գտնուած արգիլեալ զէնքերը․ Բ․ Ուշադրութիւն ընել որպէսզի, գաւառաց մէջ պաշտօնի կոչուող ոստիկանք ձեռնհաս ու պարկեշտ ըլլան։ Ոստիկանաց եւ ոստիկան զինուորաց ընտրութեան գործին մէջ կուսակալներու ու կառավարիչներու ձեռնհասութեան սահմանն ընդարձակել, որովհետեւ ոստիկանք ու ոստիկան-զինուորք՝ կուսակալներու ու կառավարիչներու գործադիր պաշտօնեաներ են և տեղական կառավարութեան ոյժն պէտք է համեմատի՝ կարգապահութեան համար իրենց ունեցած պատասխանատուութեան աստիճանին հետ։ Գ․ Աւազակներ հալածելու ու նուաճելու համար երբ կուսակալք ու կառավարիչք դիմում ընեն, զինուորական հրամանատարք պարտին առանց ժամանակ կորսնցնելու հարկ եղած աջակցութիւնն ընել։ Դ․ Կուսակալք պարտին կարելի եղած ու հարկ դատուած միջոցներով քննել աւազակաց, անծանօթ անձերու ու թափառաշրջիկներու վիճակն ու ընթացքն, ասոնցմէ օտարական եղողներն իրենց տեղերը ղրկել, տեղացիները երաշխաւորութեան ներքեւ առնել և ամեն հոգ տանիլ աւազակութիւններն արգիլելու համար։ Ե․ Դրամական պարգեւ խոստանալ անոնց, որք մեռեալ կամ ողջ ձերբակալեն աւազակապետ ու ընկերներն և այդ պարգեւի քանակութիւնն որոշելու գործն ի պահանջել հարկին յանձնել կուսակալաց։ Զ․ Դրամական տուգանք մը առնել այն գիւղացիներէն, որք տեղեկութիւն ունենալով հանդերձ թէ իրենց գիւղին մէջ աւազակներ կը բնակին և կամ աւազակութիւն մը ընելու մտադրութիւն ունին, կառավարութեան իմաց չեն տար։ Այդ տուգանաց քանակութիւնը որոշել իրենց պատկանած նահանգին Իտարէի ժողովին միջոցաւ։ Է․ Պետական Խորհրդոյ մէջ յատկապէս մնայուն յանձնաժողով մը կազմել պաշտօն ունենալով քննութիւններ կատարել ի մասին կառավարիչներու ու գայմագամներու այն գաւառաց ու գաւառակաց, ուր աւազակութեան դէպքեր կը պատահին, և ի հարկին այդ կարգի կառավարիչներու ու գայմագամներու դատաստանի ենթարկուիլն և կամ անպարտութիւնն որոշել։

Յանձնաժողով մը կազմելու համար եղած կայս․ հրամանն արդէն հաղորդուած է Պետական Խորհրդոյ նախագահին։

ՀՐԴԵՀ

Երէկ առաւօտ, արշալուսին, հրդեհ ծագեցաւ ի Գատըգիւղ, Մեօհիւրտար թաղը, Րիզա Փաշա փողոցը։ Պ․ Օլիվայի պատկանող երկու քարուկիր տուներ հրոյ ճարակ եղան։ Այս տուներ հազար ոսկւոյ ապահովագրուած էին Լոնտըն ընկերութեան։ Անոնցմէ միոյն մէջ կը բնակէր ռուսահպատակ Պ․ Համբարձում Մուրատեան, որ իր ընտանիքն Զմիւռնիա ղրկած էր եւ որ տանը կահկարասին 300 անգլ․ ոսկւոյ ապահովագրած էր Լոնտըն ընկերութեան։ Իսկ միւսին մէջ կը բնակէր հրեայ ընտանիք մը, որ կահկարասին 400 օսմ․ ոսկւոյ ապահովագրած էր Ֆէնիքսի։ Կրակը Մուրատեանի տունէն ծագած էր։ Հրեայ ընտանիքը գրեթէ կրցեր է ամբողջ կահկարասին ազատել։

Կ․ ՊՈԼՍՈՅ ՔԱՐԱՓՈՒՆՔ

Պ․ Կռանէի դրամատէրց խումբը վերջնապէս կազմուած ըլլալով՝ ի մօտոյ պատուիրակ մը պիտի ժամանէ ի Կ․ Պոլիս։

Հանրածանօթ Փրանսացի վիպասան Լէոն տը Թինսօ կոմսը Կովկասէն մայրաքաղաքս կը սպասուի այսօր։ Մի քանի օր պիտի մնայ ի Կ․ Պոլիս և պիտի հիւրընկալուի Լ․ Հէրըլտի տնօրէն Պ․ Ուիթաքէրի ամարանոցն ի Թարապիա։

—Սելանիկէ եկած լրոց նայելով, այն նաւահանգստին մէջ խարսխած անգլիական մարտանաւու մը մէջ ծաղկախտ ծագեր է։ Նաւուն հրամատարն անմիջապէս ի գործ դրեր է քարանթինայի պայմանները։

—Կայս․ հրաման՝ Ե․ զօրաբանակին առաջին անասնաբոյժ գնդապետ Խուրրէմ պէյ, Լըճանկիր զօրաց առաջին անասնաբոյժ հազարապետ Հիւսնի էֆէնտի եւ ուրիշ զինուորական անասնաբոյժ մը ի մօտոյ Հունգարիա պիտի ուղեւորին՝ օսմանեան հեծելազօրաց համար հարկ եղած հազարի մօտ ձիերը գնելով աստ բերելու համար։

—Կրէտէցի վաճառականք աղերսագրով մը խնդրեր են ընդարձակել Գանտիայի, Րէթիմնոյի ու Հանեայի նաւահանգիստներուն ի դիւրութիւն առեւտուրի։ Կ'ըսուի թէ այդ շինութիւն ընկերութեան մը յանձնելու մտադրութիւն կայ։

—Թաղապետութեան Ը․ շրջանակի տնօրէնութիւնը խնդրած է Քաղաքապետութենէն որ նոյն շրջանակի կեդրոնն Անատօլու Հիսարէն փոխադրուի ի Գանլըճա, ի դիւրութիւն գործառնութեանց։

—Անցեալ շաբաթ գիշեր Նիկոմիդիոյ մէջ ծխախոտի հինգ մաքսախոյսեր ձերբակալուեր են 400 քիլօ ծխախոտով։ Այդ պահուն մաքսախոյսք ընդդիմանալ ուզեր են դէտերուն և ասոնց ընկերացող ոստիկան զինուորներու, սակայն չեն յաջողեր։ Մաքսախոյսերէ մին ծխախոտ բեռցած ձիով մը յաջողեր է փախչիլ։

—Երէկ առաւօտ ժամ կին Ղալաթիայէն Պէշիքթաշ գնացող Թրամուէյի կառք մը բեռ կրող էշ մը կոխոտեց։

—Մայրաքաղաքիս հելլենական դեսպանատան խնդրանաց վրայ, տքթ․ Եօրկիատիս երաշխաւորութեամբ արձակուեցաւ շաբաթ օրը։

Սոյն բժիշկ, ինչպէս կը յիշուի, ձախորդ գործողութեամբ մը կնոջ մը մահուան պատճառ եղած ըլլալով, Յունաստան փախած և ապա մայրաքաղաքս գալով ձերբակալուած էր ոստիկանութեան կողմէ։

—Պոլսոյ պատժական ատեանն անցեալ օր դատեց Գումգաբուի Նշանճը Թաղի Իմամն, որ նոյն թաղի բնակիչներէն միոյն կնոջը նամակ մը ուղղելով սիրային յարաբերութիւններ բրած էր։ Իմամը դատապարտուեցաւ երեք ամսուան բանտարկութեան։

—Սապահ կը պատմէ թէ Գատըգիւղի Թաղապետութեան մավօնաճի Հասան, մէկ քանի օրէ ի վեր հիւանդ ըլլալով, շաբաթ առաւօտ մեռեր է։ Ցուցարկաւորութեան պատրաստութիւնք տեսնուեր են և գերեզմանն ալ պատրաստուեր է։ Հասանի մարմինը լուացուելու համար տան բակը տարուած պահուն մեռեալն յանկարծ արթնցեր և սկսեր է խօսիլ։

ԱԶԴ

ԱՐԵՒԵԼ․ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ

